ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 սեպտեմբերի 2026թ. թիվ 669-Ա

Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 163-րդ հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի հունիսի 25-ի թիվ 449-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Սահակյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Աիդա Սահակյանին տրամադրել 2025-2026թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2026 թվականի սեպտեմբերի 16-ից 23-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր:

2. Ա.Սահակյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Պողոսյանին:

3. Ա.Սահակյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի սեպտեմբերի 24-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-09-08 14:11:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 8
ք.Վանաձոր